

СУДЕБНЫЙ ПРОЦЕСС ТАЛААТА-ПАШИ. *Стенографический отчет.* Под редакцией проф. С. С. Степаняна. Перевод с немецкого З. Г. Назикяна. Издательство „Феникс“, М., 1992. 269 с.

1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Շարլոտեն-բուրգ փողոցում հայ վրիժառու Սողոմոն Թեհ-լիրյանի արձակած գնդակը սպանեց հայ ժողովրդի դահլճ, ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Օսմանյան կայսրության նախկին արտաքին գործերի մինիստր և մեծ վեզիր Թալեաթ փաշային։ Սպանությունը պատճառ հանգիստացավ երկարատև քննության և աշխարհը ցնցող դատական նիստի, որը տեղի ունեցավ 1921 թ. հունիսի 2—3-ին Բեռլինի երկրամասային դատարանում, նախագահությամբ դոկտոր Լեմբերգի և մասնակցությամբ հասարակության տարրեր խավերը ներկայացնող 12 երդվյալ ատենակալների։

Դատավարության ընթացքում հրապարակ հանված նյութերը աներկրայորեն վկայեցին, որ արևմտահայության 1915 թ. կոտորածների պատճառը պանթյուրքիզմն է։ Դա էր նշում, օրինակ, դատարանի կողմից որպես փորձագետ հրավիրված դոկտոր Յոհանես Լեփսիուսը։ Ամբաստանյալ Ս. Թեհլիրյանի դատապաշտպան, դոկտոր Վերթաուերի այն հարցին, թե ո՞րն էր հայերի կոտորածների իրական պատճառը, Լեփսիուսը պատասխանում է. «Համաթուրքական, համախաղաղական պետություն ստեղծելու գաղափարը, որտեղ քրիստոնյաների համար տեղ չէր լինելու» (էջ 143)։

Մանրամասնորեն ներկայացնելով հայկական արհամարհանքների պատճառները և ընթացքը, որպես իր փաստարկների հիմնավորում նշանավոր արևելագետը վկայակոչեց ոչ միայն իր իսկ կողմից հրապարակված դիվանագիտական փաստաթղթերը, այլև 1919 թ. հուլիսի 5-ի Կ. Պոլսի Ռազմական ատյանի վճիռը, որով հեռակա կարգով մահվան էին դատապարտվել երիտթուրք մի շարք պարագլուխներ, այդ թվում՝ Թալեաթ փաշան։ Այս վերջին վկայությամբ, Յոհ. Լեփսիուսը, անտարակույս, ցանկանում էր դատարանին ապացուցել, որ իրենք գործ ունեն ոչ թե անմեղ մարդու, այլ պետական ռճրագործի սպանության հետ, որը մահվան էր դատապարտվել իր իսկ հայրենիքում։

Դատավարությանը որպես փորձագետ հրավիրվել էր նաև գեներալ Լիման ֆոն Ջանդերս-

սը, նա առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական ռազմական առաքելության ղեկավարն էր Թուրքիայում և տարրեր պաշտոններ էր վարել օսմանյան բանակում։ Չնայած գեներալը հայկական կոտորածների ողջ մեղքը փորձում էր բարդել տեղական իշխանությունների, մասամբ քրեական տարրերից ու ավարառուներից կազմված ոստիկանության և քերդերի վրա, այսուհանդերձ հարկադրված էր խոստովանել, որ գլխավոր մեղքը ընկնում է երիտթուրքական կառավարության վրա։ Սակայն Լ. ֆոն Ջանդերսը, մասամբ նաև Լեփսիուսը փորձում էին միտել Գերմանիայի և գերմանացի սպանների մեղսակցությունը հայկական արհամարհանքներին։ Այսպես, Լ. ֆ. Ջանդերսը դատարանին հավաստում էր, թե «...ծառայության բերումով մենք որտեղ որ կարողացանք միշտ մտնեցինք հայերի համար» (էջ 146)։ Այդ, իհարկե, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը։

Բայց այնուամենայնիվ, գերմանացի երկու փորձագետների վկայությունները բացահայտեցին բազմաթիվ կնճռոտ խնդիրներ։

Դատավարության երկրորդ օրը մեղադրական ճառով հանդես եկավ դատախազ Գոլնիկը, պահանջելով Ս. Թեհլիրյանին մեղավոր ճանաչել կանխամտածված սպանություն կատարելու մեջ։ Ապա խոսքը տրվեց ամբաստանյալի դատապաշտպաններին (Ադուլֆ ֆոն Գորդոն, Յոհանես Վերթաուեր, Նիմայեր)։

Պաշտպանական ճառերում նրանք, խոսելով հայկական կոտորածների մասին, հիմնվելով ականատեսների և փորձագետների վկայությունների վրա, ապացուցված համարեցին, որ այդ ռճրագործության ոգեշնչողներից և կազմակերպիչներից էր Թալեաթ փաշան։ Հետևաբար, պահանջելով արդարացնել մեղադրյալին, դատապաշտպան Վերթաուերը գտնում էր, որ նա մարմնավորում է արդարության ոգին ընդդեմ բռնության, մարդկայնությունն ընդդեմ անմարդկայնության։

Պատասխանելով դատախազի այն դիտողությանը, թե դատավարությանը չպետք է քաղաքական բնույթ տալ, դատապաշտպան Նիմայե-

րը հայտարարում էր, որ ինքը և իր գործընկերներն ամեն կերպ աշխատել են խուսափել դրանից: Սակայն միաժամանակ հարկ է համարում նշել, որ Գերմանիան, լուսթյան մատնելով և թողարկելով հայկական սարսափները, ողջ աշխարհի առջև մեղավոր է հայերի կոտորածների համար:

Հաջորդ օրը, երբ լսվել էին վկաների, փորձագետների, դատախազի և դատապաշտպանների ելույթները, երկրամասային դատարանի նախագահ դոկտոր Լեմբերգի այն հարցին, թե հանցավոր է Ս. Թեհլիրյանը թալանաբեր փաշայի կանխամտածված սպանության մեջ, մեկժամյա խորհրդակցությունից հետո երդվյալ ատենակալները հանդուժ են այն եզրակացություն, որ Ս. Թեհլիրյանը անմեղ է: Դատարանի որոշմամբ մեղադրյալն ադատ է արձակվում:

Ինչպես արդեն նշել ենք, այդ դատավարությունը ցնցեց ամբողջ աշխարհը: Եվ պատահական չէ, որ այն պատմության ճեղ մտավ ոչ թե որպես Ս. Թեհլիրյանի, այլ Թալանաբեր փաշայի դատավարություն: Նույն 1921 թ. հրապարակվեցին դատավարության նյութերը՝ «Թալանաբեր փաշայի դատավարությունը (սղագրական հաջվետություն)» խորագրով: Այն լույս տեսավ գերմաներեն, Արմին Վեգների առաջարկով: Նշենք, որ Ա. Վեգները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զինվորական ծառայության մեջ լինելով, գտնվել է Օսմանյան կայսրությունում, անձամբ ականատես է եղել հայ ժողովրդի զարհուրելի սպանողի և լուսանկարել է թուրքերի վայրագությունների տեսարանները:

Շատ տարիներ անց՝ 1992 թ., նորից գերմաներեն, լույս տեսավ գրքի երկրորդ հրատարակությունը գերմանացի գիտնական, ճանաչված հայագետ ու հրապարակախոս Տեսսա Հոֆմանի առաջարկով: Գրախոսվող գիրքը 1992 թ. գերմաներեն հրատարակության ուսերեն թարգմանությունն է, որի առաջաբանը և ծանոթագրությունները գրել է պատմական գիտությունների դոկտոր Ստ. Ստեփանյանը: Մի քանի խոսք նշված երեք առաջաբանների մասին:

Գրքի գերմաներեն առաջին հրատարակության առաջաբանի հեղինակ Արմին Վեգները հայերի ցեղասպանության այն եզակի վկաններից է, որին հաջողվել է լուսանկարել և պատմությունը հանձնել հայերի ջարդերի քստմենելի տեսարանները: Իր առաջաբանում նա այն միտքն է հայտնում, որ դատավարության ամբիոնից ի լուր ողջ աշխարհի մեկ անգամ ես հայտարարվեց հայ ժողովրդի անպատմելի վշտի մասին: Նա այդ դատավարությունը ամենահիշարժաններից մեկն է համարում Գերմանիայի

պատմության մեջ, քանզի «մարդասպանի» արգարացմամբ այն քրեականից վերածվեց քաղաքականի, Ա. Վեգները դատարանի վճիռը համարում է համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող, քանի որ Ս. Թեհլիրյանի արդարացման դատավճռով ապացուցված համարվեց Թալանաբեր փաշայի և երիտթուրք մյուս պարագլուխների հանցավորությունը թուրքահպատակ հայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածների կազմակերպման գործում:

Գերմանացի մարդասերի կարծիքով, թուրք ժողովուրդը չի կրում ցեղասպանության պատասխանատվությունը, սակայն իրար հաջորդող թուրքական կառավարությունները, ժխտելով եղեռնը, մոռացության մատնելով նախկին երիտթուրք ղեկավարների և բարձրաստիճան պաշտոնյաների խոստովանությունները, կամա թե ակամա հանցակից են դառնում հայերի ցեղասպանությանը:

1992 թ. հրատարակության գերմաներեն առաջաբանի հեղինակ Տեսսա Հոֆմանի արժեքավոր ուսումնասիրությունները մեծապես ներպատում են հայերի ցեղասպանության միջադեպին ճանաչմանը: Եվ պատահական չէ, որ սույն առաջաբանը գրվել է այդ հարցին քաջատեղյակ մասնագետի կողմից: Տ. Հոֆմանը նշում է, որ հայերի կոտորածը տարեբայնորեն բռնկված ջարդ չէր, այլ պանթյուրքիզմի գաղափարներով ծրագրված և մշակված ցեղասպանություն, որը տեղի ունեցավ 1915—1916 թթ. Օսմանյան կայսրության ողջ տարածքում (էջ 5): Երիտթուրքական կառավարության հայաջինջ ծրագրի վաղօրոք մշակված լինելու ակնհայտ ապացույց է հայ տղամարդկանց և հայ մտավորականության ոչնչացումը: Հոֆմանը արձանագրում է. «Երկու միջոցառումներն էլ՝ զինվորական ծառայությանը պիտանի տղամարդկանց բանակ զորակոչելն ու սպանությունը և հայության գաղափարաքաղաքական ղեկավարության ոչնչացումը նպատակ էին հետապնդում հայ քաղաքացիական բնակչությանը զրկել քաղաքական և ռազմական առումով համախմբվելու ամեն հնարավորությունից» (էջ 5): Որպես անաչառ հետազոտող Հոֆմանը արձանագրում է նաև կայզերական Գերմանիայի մեղսակցությունը հայկական կոտորածների կազմակերպման և հրահրման գործին: Գերմանիան ոչ միայն հանգիստ հետևում էր հայերի բնաջնջմանը, այլև իր քաղաքականությունը արդարացնում, քողարկում և գովերգում էր իր դաշնակցի՝ Օսմանյան Թուրքիայի ջարդարարական գործունեությունը: Նա քննադատում է նաև ՅՈՒՆԵՍԿՈՒՄ-ին, որը Գերմանիային հանդիմանելով կարողացնում էր որպես հայերի պաշտ-

պան: Տ. Հոֆմանի գրած առաջարանը աչքի է ընկնում գիտական անալիզությամբ, դեպքերի և երևույթների իրատես զննարկմամբ, պատմական հիաստորին անկանխակալ մոտեցմամբ:

Ռուսերեն հրատարակության առաջարանը գրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանը, որը հայտնի է ցեղասպանության վերաբերյալ իր հեռադատություններով: Նրա աշխատություններում տեղ են գտել արխիվային նորահայտ վավերագրեր, որոնք նա հայտնաբերել է նախկին ԳԴՀ-ի զանազան արխիվներում: Սույն առաջարանը այդ արժեքավոր հետազոտությունների խտացրած ամփոփումն է: Համառոտ ներկայացնելով 1890-ական, 1909, 1915—1918, 1919—1922 թթ. հայերի կոտորածները, Ստ. Ստեփանյանը ցույց է տալիս սուլթան Արզուկ Համիդ II-ի, երիտթուրքական կառավարության և Մուստաֆա Փեմալի գաղափարական ու ժառանգական կապը և քաղաքական գործելակերպի նույնությունը հայերի բնաջնջման գործում:

Հենվելով հիմնականում Օսմանյան Թուրքիայի դաշնակից տերության՝ կայդերական Գերմանիայի քաղաքացիների՝ դիվանագետների, զինվորականների, միսիոներների և այլոց վկայությունների վրա, Ստ. Ստեփանյանը եզրակացնում է, որ 1921 թ. մարտի 15-ին Ս. Թեհլիրյանի արձակած զնդակը արդարացի հատուցումն էր հայերին ոչնչացնելու հրաման արձակած Թալեմաթ փաշային: Ի հաստատումն այս մտքի, նա վկայակոչում է դատավարության ժամանակ Ս. Թեհլիրյանի հայտարարությունը. «Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում, քանի որ իմ խիղճը հանգիստ է: Իսկ դատավորի ալն հարցին, թե «ինչու՞ է ձեր խիղճը հանգիստ», ամբաստանյալը պատասխանում է. «Ես մարդ եմ սպանել, սակայն մարդասպան չեմ» (էջ 45):

Առաջաբանում ընթերցողի ուշադրությունն է հրավիրվում նաև 1915—1922 թթ. այդ դժնդակ օրերի լուսավոր ու անմոռաց դրվագների՝ ինքնապաշտպանական մարտերի վրա, մարտեր, որոնց շնորհիվ փրկվեցին հարյուր-հազարավոր հայեր: Ինչպես նախորդ հեղինակները, այնպես էլ Ստ. Ստեփանյանը նշում է մեծ տեղությունների երկդիմի քաղաքականությունը հայերի ցեղասպանության խնդրում: Նա իրավացիորեն գտնում է, որ կայդերական Գերմանիան ի վիճակի էր կանխել, նույնիսկ դադարեցնել հայերի նկատմամբ իրականացվող ոճրագործությունները, սակայն գերադասեց մնալ լուռ դիտորդի դերում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին, նշում է նա, նաև մեր օրերում (Սումգայիթ, Կիրովաբադ, Բաքու) հայերի ցեղասպանությունը «ուղղված է ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության դեմ»:

Ավելորդ չենք համարում նշել, որ Ստեփանյանի առաջարանում տեղ են գտել մի շարք անճշտություններ: Այսպես, օրինակ, առաջաբանում ասված է, որ Ուրֆայի հայության դիմադրությունը տեղի է ունեցել 1915 թ. օգոստոսի վերջերին: Իրականում ինքնապաշտպանական մարտերը սկսվել են 1915 թ. սեպտեմբերի 29-ին և շարունակվել մինչև նոյեմբերի կեսերը:

Ժիշտ չէ այն տեսակետը, թե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արեւելահայերից կամավորական շուկատներ են կազմվել Արեւմտյան Հայաստանի մի շարք շրջաններում: Քաջ հայտնի է, որ կամավորական շարժման կենտրոնը եղել է Թիֆլիսը: Զոհատներ կազմավորվել են Անդրկովկասի հայաբնակ շրջաններում և Արեւելյան Հայաստանում, հիմնականում արեւմտահայերից (էջ 36):

Որոշ անճշտություններ են տեղ գտել նաև Բալեմաթ փաշայի գործունեությանը վերաբերող հատվածում (էջ 37):

Եղած թերությունները, սակայն, չեն նսեմացնում պրոֆեսոր Ստ. Ստեփանյանի կողմից կատարված հսկայական աշխատանքի արժեքը: Անուրանալի է այս գրքույկի նշանակությունը, որը, ինչպես գրում է Ստ. Ստեփանյանը, «հնարավորություն է տալիս դաս քաղել մարդկության պատմությունից և միաժամանակ նախազգուշացնում է ներկա և ապագա սերունդներին այն մասին, որ ցեղասպանությունն անհրաժեշտ է ոչ միայն դատապարտել, այլև ընդմիշտ բացառել ժողովուրդների միջև փոխհարաբերություններից» (էջ 61):

Ի վերջո նկատենք, որ դեռևս 1966 թ., ապա նաև երկրորդ հրատարակությամբ 1982 թ. Երևանում լույս տեսավ փաստաթղթերի ու նյութերի մի հարուստ ժողովածու նվիրված Մեծ եղեռնին (տե՛ս «Геноцид армян в Османской империи, под редакцией проф. М. Г. Нерсисяна»: Մոսկվայում, 1992 թ. հրապարակված այս գիրքը նոր նվեր է հայ ժողովրդի պատմությամբ հետաքրքրվող բոլոր ուսուսանողներին ընթերցողների համար:

Ռ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ գիտական աշխատակիցներ